

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-5/ և առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու մասին

27.08.2020

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու՝ Մուսալեռի համայնքապետարան

Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-5/ և առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-1/ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /ծածկագիր 3.1-5/

ա) կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին պատշաճ որակով.

բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները.

գ) ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքները.

դ) պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ գյուղապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.

ե) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին

զ) աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում.

է) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

ը) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.

թ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ

ժ) իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ սահմանված խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

ա) Միջնակարգ կրթություն,
բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հանրային ծառայության մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին» և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, տիրապետում է, անհրաժեշտ տեղեկատվության:
Մրցույթը կկայանա 2020 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 1200-ին՝ Մուսալեռի համայնքապետարանի շենքում:
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 13.09.2020 թվականի ժամը 18 00-ն:

2. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (Ծածկագիր 3.2-1)

ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին,
բ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը,
գ) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը,
դ) հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին:

Աշխատակազմի առաջին կարգի մասնագետն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.

ա) Առնվազն միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Զինապարտության մասին», «Հանրային ծառայության մասին» և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2020 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 1400-ին՝ Մուսալեռի համայնքապետարանի շենքում:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 13.09.2020 թվականի ժամը 18 00-ն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

-մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

-անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան / Շառլ-Տիրան Թեքեյան 2/1, հեռ 0231 6 47 22/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե՝ ք. Արմավիր, Խ. Աբովյան 71, հեռ 0237 2 07 70, 0237 2 76 49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2020 թվականի սեպտեմբերի 13-ը: Հեռ.՝ 0231 6 47 22

Էլ. փոստ՝ musaler.armavir@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1

Հեռ.՝ +374 231 64722

Էլ. փոստ՝ musaler.armavir@mta.gov.a